ԳՈՅՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Posted on July 31, 2025 by Lucy Deukmejian



Category: Opinions

Մարգարիտա Կրտիկաշյան, ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ, Երևան, 23 յուլիս 2025

Հայաստանի պատմության մեջ հազվադեպ են եղել այնպիսի պահեր, երբ մեր ազգի գոյությունը կասկածի տակ դրվի այսչափ բացահայտ և սուր վտանգներով: Սակայն այսօր մեր առջև դրված խնդիրը միայն անհատական կամ կուսակցական ընտրություն չէ, այլ ազգի բուն գոյության հարց: Չկա ավելի կարևոր նպատակ, քան ապահովել հայ ժողովրդի հետագա անվտանգ գոյությունը, քանի որ առանց պետության՝ ինքնիշխանության, սահմանների անձեռնմխելիության և ժողովրդավարության հիմքերի, չեն կարող զարգանալ, բարգավաճել կամ պահպանվել մեր մշակույթն ու ինքնությունը:

Այս պահին մենք կանգնած ենք մի պատմական խաչմերուկում, որտեղ անհրաժեշտ է ոչ միայն տեսնել իրականությունը, այլ նաև համախմբել ուժերը՝ սառը գլուխներով, առանց հիասթափության կամ վախի, և կառուցել գոյության ռազմավարություն՝ համաթուրքականության (պանթուրքիզմ), ներքին դավաճանության և աշխարհաքաղաքական ճնշումների դեմ:

Համաթուրքականությունը ծնվել է 19-րդ դարի վերջին՝ որպես թյուրքախոս հանրույթներին միավորող գաղափարախոսություն, որը նպատակ ուներ շրջափակել Ռուսաստանի կայսրությունը: Թեև սկզբում սա միայն գաղափար էր, 21-րդ դարում այն վերածվել է ծավալապաշտական գործնական ծրագրի: Այսօր Թուրքիան և նրա դաշնակից Ադրբեջանը շահագրգռված են ոչ միայն Հայաստանի պետականության քայքայմամբ, այլև Ռուսաստանի հարավային և Իրանի հյուսիսային շրջանների թյուրքախոս բնակչության միավորումով ու նրանց վերահսկողությամբ: Հայաստանը մնացել է վերջին խոչընդոտը այս ծրագրի իրականացման ճանապարհին: Այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» շուրջ մանևրները, որոնք կոչվում են «տարածաշրջանային տնտեսական համագործակցություն», իրականում նպատակ ունեն կտրել Հայաստանը՝ դարձնելով մեր երկիրը ճանապարհային միջանցք թյուրքական աշխարհին:

Իրանի համար սա սուր սպառնալիք է: Թյուրքախոսության տարածումը Իրանի հյուսիսում, ինչպես նաև թուրքական տնտեսական ու մշակութային ազդեցությունը կարող են սրվել՝ հրահրելով անջատողական տրամադրություններ: Սա կհանգեցնի Իրանի ներսում ճգնաժամի և տարածաշրջանային անվտանգության լրջագույն խափանման:

Ռուսաստանի համար Հայաստանը համարվում է կենսական «բուֆերային գոտի», և Հայաստանի անկումը կհանգեցնի Ռուսաստանի հարավկովկասյան քաղաքականության ձախողմանը՝ ազդելով նաև Կրեմլի միջազգային վարկի վրա:

Այս առումով՝ Հայաստանը փաստորեն ծառայում է ոչ միայն սեփական, այլև

տարածաշրջանի, Ռուսաստանի ու Իրանի անվտանգության ապահովմանը:

Միջազգային իրավունքի տեսանկյունից ուշագրավ են Բոլիվիայի և Չիլիի հարաբերությունները, որոնք սկսվեցին 19-րդ դարի վերջերին: Բոլիվիան, կորցնելով ելքը դեպի Խաղաղական օվկիանոս, բազմիցս պահանջել է միջանցք ո՛չ թե ռազմական ուժի, այլ իրավական ճանապարհով: Սակայն 2018 թվականին Հաագայի Միջազգային դատարանը մերժեց Բոլիվիայի պահանջը՝ հստակեցնելով, որ ըստ միջազգային իրավունքի՝ Չիլին պարտավոր չէ Բոլիվիային միջանցք տրամադրել:

Այս վճիռը նախադեպ է բոլոր պետությունների համար և հստակ ուղերձ, որ տարածքային խնդիրները լուծվում են բացառապես երկկողմ համաձայնություններով և ոչ թե պարտադրանքով:



Այս օր Թուրքիայի նեցուկն ունեցող Ադրբեջանը առաջ է քաշում համանման պահանջ՝ փորձելով Հայաստանի Հանրապետությանը պարտադրել միջանցք նրա տարածքով (այն էլ՝ ՀՀ-ի կողմից ամբողջովին անվերահսկելի): Միջազգային հանրությունը պետք է հիշի Բոլիվիայի փորձը և դատապարտի այս ապօրինի պահանջները:

Հայաստանի ներքին քաղաքական կյանքում վերջին տարիներին նկատվում է արընթաց քայքայում, որի հստակ դրսևորումներից է պետական կառավարման համակարգի թուլացումը, բանակի անկումը և ազգային դիմադրողականության կորուստը: Նիկոլ Փաշինյանի վարչակարգը, չնայած հրապարակավ խոսում է անկախության և ինքնիշխանության մասին, իր գործելաոճով միտում ունի դավաճանության և ազգային շահերի դեմ գործելու:

Պատերազմի հետևանքների ծանր բեռը, կորուստները և ներքին հակասությունները վերածվել են պատրվակի՝ ընդդիմադիր ուժերի հետապնդման և պետական ապակառուցողական քայլերի համար: ՀՅԴ անդամների տներում իրականացվում են խուզարկություններ, ձերբակալվում են հայրենասեր քաղաքական գործիչներ, իսկ այն օրերին, երբ խուզարկություններն իրականացվում են, վարչապետը հանդիպում է Ալիևի հետ՝ Աբու Դաբիում, մի վայրում, որը կարծես դարձել է դիվանագիտական կուլիսային պայմանավորվածությունների նոր կիզակետ:

2025 թվականի հուլիսին, մինչ Աբու Դաբիում կայացած հանդիպումը, Հայաստանի վարչապետը մասնակցեց Ստամբուլում անցկացված միջոցառմանը, որտեղ հայտարարեց, թե «միջանցքի գաղափարը խնդիր չէ»: Այս ելույթը հնչեց ոչ միայն թուրքական, այլև արևմտյան լսարանի ներկայությամբ՝ խաղաղության պատրանքի ներքո ներկայացվող զիջումի տրամաբանությամբ: Այնուհետև, տեղի ունեցավ Փաշինյան-Ալիև այս տարվա առաջին ուղիղ հանդիպումը Աբու Դաբիում, առանց ակնհայտ միջնորդների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի կամ Եվրամիության: Հանդիպման վայրի ընտրությունը պատահական չէր. վերջին տարիներին Արաբական Միացյալ Էմիրությունները (ԱՄԷ) խորացրել է հարաբերությունները թե՛ Ադրբեջանի, թե՛ Թուրքիայի հետ՝ խոշոր ներդրումներ կատարելով այդ երկրների էներգետիկ և ենթակառուցվածքային ոլորտներում:

2024-ի դեկտեմբերին ԱՄԷ-ն և Ադրբեջանը ստորագրեցին համապարփակ տնտեսական գործընկերության համաձայնագիր, ընդլայնեցին համագործակցությունը վերականգնվող էներգիայի ոլորտում և մեկնարկեցին համատեղ լոգիստիկ նախաձեռնություններ: Թուրքիան, ԱՄԷ-ն և Իսրայելը գործուն ներգրավվածություն են ցուցաբերում տարածաշրջանում: Թեև դժվար է խոսել հստակ ձևավորված դաշինքի մասին, սակայն այս զարգացումները վկայում են Հարավային Կովկասում նոր տիպի համախմբման ձևավորման մասին՝ տնտեսական, քաղաքական և ռազմավարական բաղադրիչներով:

Այս իրողությունների ֆոնին Հայաստանը կանգնած է դիվանագիտական մի նոր փուլի առջև, որտեղ ինքնիշխանության և հավասարակշռության պահպանումը հնարավոր է միայն Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերությունների ռազմավարական վերաիմաստավորման ու խորացման պայմաններում: Այս պետությունները, որոնք դեռևս շահագրգռված են տարածաշրջանում ուժերի հավասարակշռության

պահպանմամբ, կարող են դառնալ այն հենասյուները, որոնց միջոցով Հայաստանը կզսպի արտաքին ճնշումները և կվերականգնի իր տարածաշրջանային դերակատարությունը: Առանց այդ ուղեգծի՝ Հայաստանը կարող է շարունակաբար ենթարկվել նոր փաստի առաջ կանգնեցվելու փորձերի, որոնք վտանգում են նրա թե՛ տարածքային ամբողջականությունը և թե՛ ազգային ինքնությունը:

Այլ մեծ խնդրի առաջ է կանգնած Հայ Առաքելական Եկեղեցին: Դարեր շարունակ նա եղել է մեր ժողովրդի ինքնության ու գոյության կարևոր սյունը, բայց այսօր հայտնվել է ճնշումների տակ:

Վերջին ամիսներին Տավուշի և Շիրակի թեմերի առաջնորդ Բագրատ Գալստանյան ու Միքայել Աջապահյան արքեպիսկոպոսները անօրինական կերպով կալանավորվել են և գտնվում են ԱԱԾ մեկուսարանում: Այս աննախադեպ փաստը վկայում է պետության կողմից հոգևոր կառույցների դեմ իրականացվող պարբերական ճնշումների մասին:

Պատմական զուգահեռները հիշեցնում են, որ ցեղասպանության տարիներին *ասկյարները* ուժ էին կիրառում ոչնչացնելու հայկական հոգևոր և մշակութային կենտրոնները՝ համոզված լինելով, որ հավատն ու հոգևորությունը ազգի պահպանման հիմնասյուներից են:

Այսօր կրկնվում է նույն սցենարը՝ նոր ժամանակների նոր մարտավարությամբ, բայց այս անգամ հայի ձեռքով:

Հայկական սփյուռքն ունի առանցքային նշանակություն Հայաստանի ապագայի համար: Սփյուռքն այսօր ունի ֆինանսական, քաղաքական, մշակութային հսկայական կարողականություն, որը, սակայն, արդյունավետ չի կիրառվում՝ ներքին փտածության և քաղաքական շահերի պատճառով:

Հազվադեպ են լինում համահայկական միասնություն և համակարգված ջանքեր, որոնք կարող են ազդել Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականության վրա:

Սփյուռքը պետք է դուրս գա կարճատես քաղաքական շահարկումների տարածքից և միավորվի ազգային ինքնության, պետականության և անվտանգության օրակարգի շուրջ:

Հայաստանի պատմությունը բազմիցս ապացուցել է, որ հայ ժողովուրդը ոչ միայն գոյատևել է, այլ նաև վերածնվել է ամենաբարդ պահերին: Սակայն այդ վերածնունդը չի կարող լինել պատահական կամ կախված արտաքին ուժերից: Այն պայմանավորված է մեր հավաքական կամքից, ինքնագիտակից ընտրություններից և ռազմավարական մտածողությունից:

Այսօր մենք ընտրության առաջ ենք՝ կա՛մ մնալու ենք ականատեսները, թե ինչպես պատմական հայրենիքը վերածվում է դաշինքների ու շահերի տարափի զոհի, կամ կդառնանք ազգային դիմադրության շարժման առանցքային մասը՝ վերականգնելով մեր

երկրի պատիվն ու անկախությունը:

Միայն համախմբված և պատրաստ՝ կարող ենք ապացուցել, որ Հայաստանը ոչ միայն ներկա է աշխարհաքաղաքական խաչմերուկում, այլև կարող է դառնալ տարածաշրջանի խաղաղության և կայունության երաշխավորը:

Մենք ունենք պատմական պարտավորություն՝ պահպանել մեր երկրի հողը, մշակույթը, հավատն ու լեզուն՝ դրանք հաջորդ սերունդներին ժառանգելու համար: Եվ այդ պարտավորությունն իրականացնելու համար պետք է կարողանանք հաղթահարել վախի ու հիասթափության սահմանը և համախմբվել գոյության ուղու շուրջ՝ անկախ քաղաքական հակադրություններից:

Հայաստանին այսօր ամեն ժամանակից ավելի անհրաժեշտ է միասնություն, որն ամրագրվի ոչ թե թղթով, այլ գործնական քայլերով, առանց խաբեության ու խոչընդոտների:

Համաձայնեք, թե չէ, բայց մեզ մնում է միայն այս ճանապարհը իբրև գոյության ռազմավարություն, այլ ոչ թե պարտվողականության քաղաքականությունը, որտեղ կորցնում ենք ոչ միայն հողը, այլ նաև մեր հոգին ու ինքնությունը:

Մարգարիտա Կրտիկաշյան, Էլ. փոստ՝ margaritakrtikashyan@gmail.com

Comments



Dr. Ishkhan Babajanian – 2025-08-02 02:28:35
13 օր առաջ պարսկերեն նամակ ուղարկել եմ Իրանի արտաքին գործերի նախարարության և Երևանում Իրանի դեսպանին: Իրանական պաշտոնյաների հայտարարություններից Սյունիքի մասին դրական արձագանք լսեցինք: Սա մեր ազգային շահերի համար դրական քայլ է և չափազանց գնահատելի: Թուրքերը մոտ 200 տարի է Իրանի Ատրպատականի, Թավրիզի, Ուրմիայի (իմ ծննդավայրը), Սալմաստի, Խոյի, Մաքուլի և այլ Իրանական Ադրբեջանի շրջանների վրա աչք ունեն: Սյունիքի չարագուշակ ծրագրերը ինչպես մեր ինքնիշխանության, ազգային շահերին հակասում են, նույնպես հակասում են Իրանի ազգային և ռազմավարական շահերին: Իրանի հոգևոր առաջանորդ այաթոլա Խամենեիի միջազգային հարցերով գլխավոր խորհրդական, նախկին արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթի ասեց «Զանգեզուրի միջանցքի» նախագծին աջակցում են « պանթուրքիստական շարժումները» և դա հակասում է Իրանի ազգային շահերին: Վելայաթիի համոզմամբ՝ «Զանգեզուրի միջանցք» անվան տակ իրականում թաքնված է լայն աշխարհաքաղաքական ծրագիր Իրանի դեմ: Նրանց «իրական նպատակն է թուլացնել «դիմադրության առանցքը», խզել Իրանի կապը Կովկասի հետ և հարավում Իրանի ու Ռուսաստանի դեմ իրականացնել ցամաքային բլոկադա»: Խոսելով Ադրբեջանի և Թուրքիայի առաջ քաշած «Զանգեզուրի միջանցք» նախագծի աշխարհաքաղաքական նպատակների մասին, Վելայաթին ընդգծում է՝ Թեհրանը ի սկզբանե հստակ ու վճռական կերպով ընդդիմացել է այս քայլերին և նույնիսկ «սահմանին ուժեր է տեղակայել և իրականացնում է կանխարգելիչ զորավարժություններ՝ ցույց տալու համար, որ Իրանի համար ազգային անվտանգությունը կարմիր գիծ է»: Վելայաթիի խոսքով՝ «պասիվ արձագանքի» փոխարեն «ակտիվ կանխարգելման» քաղաքականությունը Իրանի կողմից որդեգրված խելացի ռազմավարություն է: Թեհրանը «Զանգեզուրի միջանցքի» թեման գրեթե ամենօրյա ռեժիմով շարունակում է պահել իր օրակարգում, Իրանի արտգործնախարարի խոսնակ Իսմայիլ Բաղային ընդգծել է, որ ուշադիր հետևում են զարգացումներին: Խոսելով «տրանսպորտային երթուղիների ընդլայնման» մասին, Բաղային ասել է, որ «այն ոչ մի կերպ չպետք է հակասի երկրների ազգային ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը, ինչպես նաև չպետք է հանգեցնի տարածաշրջանի աշխարհաքաղաքականության կամ ճանաչված սահմանների որևէ փոփոխության»: